ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 19-ին Գեր. Տ. Յուսիկ եպիսկոպոսը Նորին Վեհափառութեան հրամանով ս. Հռիփսիմէի վանքում աւագ սարկաւագութեան աստիճան տուաւ Մայր Աթոռի միաբան դպ. Սպիրիդոն Մելիքեանցին, որ վերակոչուեց Ստեփանոս, և Մկրտիչ Տէր Մկրտչեանցին։ Նոյն օրը երեկոյեան վերջնին կոչումն եղաւ, և հետևեալ օրը, ապրիլի 20-ին, քահանայ ձեռնադրեց Զաքաթալայի հայոց եկեղեցու վերայ։ Երկու նուիրեալներն ևս աւարտել են Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի լիակատար դասընթացքը։

Գեր. Տ. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունին, Վեհափառ Հայրապետից երեքամսեայ թոյլտուութիւն ստանալով, գնաց Տփխիս բժշկուելու։

Տփխիսի Հայոց Կոնսիստորիայի նախանդամ Տ. Արսէն վարդապետը արձակուելով իւր պաշտօնից, նրա փոխարէն Հայրապետական սրբատառ կոնդակով կարգուեցաւ Աղէքսանդրապոլի փոխանորդ Տ. Տիրայր վարդապետը, որ իւր նախորդի նման ստանձնում է նաև Տփխիսի ս. Սարգիս վանքի վանահայրութիւնը և Էջմիածնի կալուածոց կառավարչի պաշտօնը։

Մայր Աթոռս ժամանեց Կարսի փոխանորդ Տ. Կիւրեղ վարդապետը, որ կանչուած է Նորին Վեհափառութեան կողմից հեռագրով, իւր փոխանորդութեան վիճակի մասին կարևոր զեկուցումներ տալու Վեհափառ Հայրապետին։

Բարձր. Մեսրոպ արեղան, որ Վեհափառ Հայրապետի հրամանով գնացել էր Ախալքալաք մեծի պահոց օրերին և զատկական տօներին ժողովրդին հոգեպէս մխիթարելու իւր քարոզներով, վերադարձաւ Մայր Աթոռ։

Մայր Աթոռ եկաւ նոր Բայազէտի գործակալ Տ. Խորէն վարդապետը, որ մի քանի օր այստեղ մնալուց յետոյ գնաց Թիֆլիզ՝ նոր Բայազէտում կառուցուելիք եկեղեցու շինութեան պէտքերը հոգալու համար։

Տ. Մեսրոպ վարդապետը Վեհափառ Հայրապետի բարեհաճ թոյլտուութեամբ մեկնեց Թիֆլիզ, Մայր Աթոռում բագուաբնակ պ. Իւղրաշեանի հաշուով շինուելիք մատենադարանի շինութեան մակարդակը պատրաստել տալու համար։

Ադուլեաց ս. Թովմա առաքելի վանքի վանահայր Տ. Սահակ վարդապետի հրաժարականն ընդունուած լինելով Վեհափառ Հայրապետի կողմից, վերադարձաւ Մայր Աթոռ։

Տ. Գրիգորիս վարդապետը նշանակուած է ս. Շողակաթի վանքի վանահայր, ի տեղի նորոգ հանգուցեալ Յովհաննէս վարդ. Դպիր Վարդանեանցի։